ՐԵՏ ԸՐԴԵԼՈՎ ԺԱՄԱՆԱԿԸ

ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱՆՆԱ ՂԱՋԱՐՅԱՆ, ՄԱՐԻԱ ՂԱՋԱՐՅԱՆ

Սուսաննա Հարությունյան

Հետ շրջելով ժամանակը

«Издательские решения»

Հարությունյան Ս.

Հետ շրջելով ժամանակը / Ս. Հարությունյան — «Издательские решения»,

ISBN 978-5-44-964235-6

Իրադարձությունները տեղի են ունենում 2198 թ.: Զուլյա Վեքսլերը ε-գալակտիկայի մոգության դպրոցի լավագույն աշակերտուհին է: Դպրոցը ավարտելուց հետո նրան պրակտիկայի են նշանակում ω-գալակտիկայում՝ օդաչուների հրամանատար Զեկ Բլեքի ուղեկցությամբ: Սակայն հանգամանքները փոխվում են: Զուլյային ուղարկում են Երկիր՝ որպես երկրացիներին անցյալ տեղափոխելու ծրագրի մասնակից: Ո՞վ է Զուլյա Վեքսլերը: Ինչո՞ւ է նրան հետապնդում մոգության դպրոցի ղեկավարությունը, և ինչպե՞ս նրան հաջողվեց իրեն պաշտպանել դեռահասների աջակցությամբ:

ISBN 978-5-44-964235-6

© Հարությունյան Ս.
© Издательские решения

Содержание

Գլուխ 1 Զուլյան 6
Конец ознакомительного фрагмента. 15

Հետ շրջելով ժամանակը

Սուսաննա Հարությունյան
Աննա Ղազարյան
Մարիա Ղազարյան

շապիկի ձևավորումը՝ Արաբո Սարգսյանի
թարգմանությունը ռուսերենից՝ Մելանիա Միքայելյանի

© Սուսաննա Հարությունյան, 2019
© Աննա Ղազարյան, 2019
© Մարիա Ղազարյան, 2019

ISBN 978-5-4496-4235-6
Создано в интеллектуальной издательской системе Ridero

Գլուխ 1 Զուլյան

2198 թվական: Թզուկ ε-գալակտիկա, ինչ-որ տեղ α, β, γ… ω-գալակտիկաների միջև: Մոգության դպրոց:

– Էլիզաբե՛թ Սմիթ: Ձեր պրակտիկան կանցկացնենք β-գալակտիկայում: Դուք կուղևորվեք վաղը: Ձեզ կուղեկցի Ստյուարտ Լարկինը:

– Մարգարե՛տ Քյոնինգ: Դուք Կուրտ Կոխի հետ կթռչեք γ-գալակտիկա:

– Բոնի՛ Ցիմերման: Ձեր պրակտիկան նշանակված է α-գալակտիկայում: Ձեզ այնտեղ կտանի Լեսլի Ջիմերը:

«Իսկ իմ հե՞րթը երբ կհասնի: Ու՞ր են ուղարկում ինձ», – Զուլյայի գլխում, տիկին Էրիկա Գրոյսմանի հատու, միալար ձայնի «նվագակցությամբ», ասես աստղիկների պես, փայլատակում էին ու անմիջապես էլ մարում հարցեր, որոնք մնում էին անպատասխան: Նրա մտապատկերով անցնում էին իր կյանքի կարևոր իրադարձությունները:

Փոքրիկ աղջիկ էր, շատ պստլիկ, երբ որբացավ: Նույն օրը մահացան ծնողները և եղբայրները: Նրան դաստիարակեցին խորթ ծնողները: Նրանք տարիքն առած, անզավակ, աղքատ մարդիկ էին: Աղջիկը գիտեր, որ Մեգին ու Զոնը իր կենսաբանական ծնողները չեն, բայց նա միշտ իրեն զգացել էր որպես իսկական, համերաշխ ընտանիքի մի մասնիկը: Մեգին ու Զոնը սիրում էին Զուլյային: Եվ միշտ նրա հետ վարվում էին ընդգծված հարգանքով՝ ցուցաբերելով ուշադրության առանձնահատուկ նշաններ: Դա նրանց միջև որոշակի հեռավորություն էր ստեղծում, որը տարիքի հետ ավելի ու ավելի էր շփոթեցնում Զուլյային:

Յոթ տարեկանում նրան տվեցին մոգության իգական փակ դպրոց-ինտերնատ, որտեղ նա սովորեց և ապրեց տասը տարի: Հենց որ Զուլյան ոտք դրեց դպրոցի շեմին, սկսվեց անհավատալի իրադարձությունների շքերթը: Սկզբում նա հազիվ փրկվեց վառվելուց: Պարզվեց, որ իրարանցման մեջ Զուլյան անզգուշաբար տրորել էր Զեյնի ոտքը, որի հետ բախվել էր դասարան մտնելիս, դռների արանքում: Սա ճչաց ցավից և այնպես զայրացավ Զուլյայի վրա, որ իր հայացքից մի ակնթարթում բոցավառվեց Զուլյայի համազգեստը: Աղջիկը չհասցրեց անգամ վախենալ, երբ իր կողքին, կարծես գետնի տակից, դուրս եկան երկու պահնորդ և հանգցրին կրակը: Դասարան մտնելով՝ աղջիկները ականատես դարձան Քեսսիի և Լինդայի միջև ծավալվող վեճին: Կորել էին Քեսսիի դասագրքերը: Եվ նա այդ բանում մեղադրում էր Լինդային:

– Իմ ինչի՞ն են պետք քո դասագրքերը: Ես իմ սեփականն ունեմ, – պնդում էր Լինդան՝ փորձելով խելքի բերել Քեսսիին:

– Մի րոպե առաջ դրանք տեղում էին, – բղավում էր Քեսսին:

Կրքերն այն աստիճան շիկացան, որ ներկաները ստիպված էին միջամտել: Եվ հանկարծ ցուցափեղկերի վրայից սկսեցին թռչել մետաղյա բոլոր առարկաները: Դրանց, մագնիսի պես, իր կողմն էր ձգում Կարլան, որին ամբոխը տուրուդմփոցի մեջ փորձում էր դուրս գցել դռնից: Հաջորդ վայրկյանին բոլորը և ամեն ինչ կախվեցին օդում. աղջիկները և առարկաները՝ անշարժացած դիրքերով:

Զուլյան նրանց կանգնեցրեց հայացքով: Հայտնի չէ, թե էլ ինչ կարող էր տեղի ունենալ, բայց այդ պահին հնչեց զանգը: Դասարան մտան տիկին Էրիկա Գրոյսմանը և դասղեկ Անդրեա Լիվանդովսկայան:

– Ի՞նչ է տեղի ունենում այստեղ:

Դպրոցի տնօրենի ձայնի մետաղական հնչերանգը ցուցափեղկերից ընկնող առարկաներից ավելի սարսափելի էր: Նույն պահին բոլորը քարացան, հետո սթափվեցին ու հանգստացան:

Դպրոցի վիթխարի, վեհասքանչ շենքը սարսուռ ու ակնածանք էր ներշնչում: Իսկ ղեկավարությունը առաջին իսկ դասից աշակերտներին հասկացնել տվեց, թե ով է այստեղ տերը:

Սկսվեց դպրոցական առօրյան: Առաջին երեք տարում բոլորը սովորում էին միակ և նույն ծրագրով: Դասերը, առարկաները հերթով հաջորդում էին մեկը մյուսին: Յուրաքանչյուր աշակերտուհի ի վերուստ տրված շնորհ ուներ: Դպրոցում կատարելագործում էին այն: Եվ բոլորն էլ այդ բանում հասնում էին հաջողության: Բայց ամենակարևորը, – և դա տարրական դպրոցի ուսուցման գլխավոր արդյունքն էր, – սեփական մտքերը, հույզերը և գործողությունները վերահսկելու կարողությունն էր: Դա ամենաբարդն էր: Շատերն էին լքում դպրոցի պատերը երրորդ դասարանից հետո: Ամեն մեկը չէ, որ ի վիճակի էր իրեն տիրապետել, իր շնորհը գործադրել որոշակի հանգամանքներում միայն անհրաժեշտ արդյունքը ստանալու համար: Իսկ նրանք, որ մնացին դպրոցում, սովորեցին գնահատել այն, ինչ ունեին:

Չորրորդ դասարանից սկսած՝ տեղի էր ունենում ֆակուլտետների համակարգումը: Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր մասնագիտացումը: Սակայն այստեղ էլ կային բոլորի համար ընդհանուր առարկաներ: Ինչպես, օրինակ, հեռազգացություն, հեռաշարժում, հեռափոխադրության պարզագույն ձևեր: Համընդհանուր էր նաև արդյունքը՝ մարդկանց վրա ներգործելու կարողությունը՝ ոչ միայն ի բնե տրված շնորհով, այլ նաև, որն առավել կարևոր է, բանականության օգնությամբ:

Զուլյային դպրոցում գնահատում էին: Նա լավ էր դաստիարակված և արտասովոր ընդունակությունների տեր էր. ուներ բացառիկ հիշողություն, կարող էր արագ հաշվել, ճշտել տեղեկությունը, կողմնորոշվել անծանոթ իրադրության մեջ, ճանաչել ծածկագրերը, խորհրդանիշները, նշանները և դրանք փոխադրել ցանկացած լեզվի՝ թեկուզ հին գաղտնագրերի լեզվի, թեկուզ փոքր ժողովրդների խոսվածքների: Այդ կարողություններով, ուրիշի կամքին ներգործելու շնորհի հետ մեկտեղ, նա օժտված էր դեռ ծնված օրից: Հետո դրանք զարգացրին մոգության դպրոցում: Աղջիկների հետ դպրոցում նա ջերմ, ընկերական հարաբերությունների մեջ էր: Եվ միայն Զեկի հետ ուներ իսկական բարեկամական կապեր: Զեկը դպրոցի լավագույն օդաչուն էր: Նրանք հազվադեպ էին հանդիպում: Հավանաբար, նաև դա էր պատճառը, որ յուրաքանչյուր հանդիպում նրանց համար անմոռանալի իրադարձություն էր դառնում:

Զուլյան Զեկին Մեգիի և Զոնի հետ ծանոթացրեց ծնողական օրերից մեկի ժամանակ: Զուլյային թվաց, որ Զեկը նրանց դուր է եկել: Միայն թե ծնողները ցանկացած պատրվակով խոչընդոտում էին նրանց մերձավոր շփումները: Բայց հենց Զուլյան փորձում էր այդ մասին խոսել, Մեգին ու Զոնը, միաբանած, հայտնում էին իրենց անհամաձայնությունը:

Սովորողները և օդաչուները միասին մասնակցում էին հանդիսավոր միջոցառումներին: Այսօր դրանցից մեկն էր: Ավարտական դասարանի աշակերտուհիների խումբը պրակտիկայի էր մեկնելու մոգության դպրոցը հիմնադրող գալակտիկաներ:

– Զուլյա՛ Վեքսլեր, Ձեր պրակտիկայի նշանակման վայրը ω-գալակտիկան է: Իսկ Ձեզ ուղեկցում է Զեկ Բլեքը:

Դպրոցի տնօրենի ձայնը Զուլյային վերադարձրեց իրականություն: Նա դեռ չէր կարողացել գիտակցել իր նշանակման կարևորությունը, երբ բոլոր ընկերուհիները շրջապատեցին նրան և սկսեցին շնորհավորել: Այդ մասին կարելի էր միայն երազել: Դպրոցի գոյության ամբողջ պատմության ընթացքում ընդամենը մի շրջանավարտի էր վիճակվել այդ գալակտիկայում լինելու պատիվն ունենալ: Իսկ հիմա բախտը ժպտացել էր Զուլյային: Զարմանալի չէր: Որևէ մեկը նրա նման ավարտական բալեր չուներ: Երեք տարվա ընթացքում դպրոցում ուսումը շարունակելու հավակնորդների ցուցակում Զուլյայի ազգանունը նշվում էր առաջինը: Իսկ Զեկի կողմից թռիչքն իրականացնելը ինչ-որ արտասովոր դեպքերի շարքից էր: Զեկը՝ օդաչուների անձնակազմի ղեկավարը, մինչ այդ ոչ մեկին չէր ուղեկցել պրակտիկայի:

«Գոնե շուտ գար վաղվա օրը: Համենայն դեպս, հնարավոր կլինի մի քանի ժամ առանձին մնալ Զեկի հետ»:

Ուղևորությունը նշանակված էր առավոտյան ժամը վեցին: Զուլյան քնել չկարողացավ: Նա տարօրինակ հուզմունք էր ապրում: Իրականում ի՞նչ կարող էր տեղի ունենալ: Գալակտիկաների մասին ամեն ինչ հայտնի է: Կամ՝ գրեթե ամեն ինչ: Մոգության դպրոցում տասը տարվա լարված պարապմունքները իզուր չեն անցել: Այո՛, ω-գալակտիկան ամենաքիչ ուսումնասիրվածն էր, բայց, ընդհանուր առմամբ, առանձնապես չէր տարբերվում մյուսներից: Պարզապես այն ավելի մեծ էր և ավելի հեռու: Այդ պարագայում ի՞նչն էր աղջկան այդպես անհանգստացնում:

«Անհայտությունը, վախ ազդող», – ինքն իրեն խոստովանեց Զուլյան: Նա ոչ միայն երբևէ չէր լքել ε-գալակտիկան, այլև չէր հեռացել անգամ մոգության դպրոցից: Մեգին ու Զոնը իրեն այցելում էին դպրոցում, բայց տուն չէին տանում անգամ հանգստյան օրերին, արձակուրդներին: Եվ ինչո՞ւ ինքն այդ մասին առաջ չէր մտածում:

«Արդեն գիշերվա մեկն է: Ժամը հինգին պետք է լինել թռիչքի գոտում: Անհրաժեշտ է մեկ-երկու ժամ քնել: Դե՛, Զուլյա, ինչի՞ են պետք քո գիտելիքները, եթե չես կարող քեզ ստիպել քնել: Միայն թե նախատինքների կարիք չկա: Պարզապես հանգիստ պառկիր ու փակիր աչքերդ: Հաշվիր մինչև տասը: Ա՛յ, ապրես…»: Եվ Զուլյան ընկղմվեց խոր քնի մեջ: Նա ահավոր արագությամբ սլանում էր դեպի անդունդը: Նրան ներս էր քաշում վիթխարի ձագարափոսը ինչ-որ տեղ՝ հեռավոր խորքում: Եվ երբ թվաց, թե իրեն կոչնչացնեն մրրկային պտտահողմերը, մեկը բռնեց ու դուրս քաշեց իրեն:

Այդ պահին զնգաց զարթուցիչը: Ժամը չորսն անց կես էր: Զուլյան ինքն իրեն կարգի բերեց, ձեռք տվեց սենսորներին, հաղորդիչները գործի ընկան, դուռը բացվեց, և աղջիկը մտավ միջանցք: Նա դժվարությամբ էր հաղթահարում ամեն մի քայլը: «Քունդ չես առել: Ոչինչ: Թռիչքը երկար է: Դեռ կհասցնես քնել»:

Զուլյան ուղղվեց դեպի Միջգալակտիկական թռիչքների դիսպետչերական (ՄԹԴ): Այստեղ աշխատանքը չէր ընդհատվում և ոչ մի րոպե: Նա մտավ թռիչքների սպասման մեկուսասրահ: Այնտեղ սկսել էին հավաքվել պրակտիկանտները: Ու գլխում միտք փայլատակեց. «Ինչպիսի հզոր համակարգ է ծառայում մոգության դպրոցին: Տարօրինակ է՝ ես այդ մասին առաջ չեմ մտածել»:

Պահեստի շենքը շատ մոտ էր գտնվում: Ամեն մեկը գնաց իր մեկուսասենյակը, հանդերձանք ստացավ, զգեստավորվեց հատուկ կոստյումով: Ուղիղ ժամը վեցին բոլոր խմբերը պատրաստ էին ուղևորության: Զուլյայի թռիչքը չվացուցակով վերջինն էր: ՄԹԴ-ի ապակյա պատի միջով նա հնարավորություն ուներ մեծ էկրանին հետևելու նավերի տեղաշարժին: Դյութիչ տեսարան էր:

Հնչեց հրամանը՝ թռիչքին պատրաստվի Զուլյան: Զեկն արդեն ստուգել էր ամրակապերը, սարքերը, նավագնացության համակարգը: Եվս մեկ անգամ նայեց թռիչքի պարամետրերը, որ ծրարի մեջ նրան էին հանձնել անմիջապես տիեզերանավ նստելուց առաջ: Ամեն ինչ սովորականի պես էր: Միայն Զուլյան էր անհանգիստ:

Խոսակցությունները ձայնագրվում էին: Զեկը միացրեց եթերում խոչընդոտներ առաջացնող համակարգը: Դա նրա սեփական մշակումն էր, որ ոչ մեկին հայտնի չէր:

– Թուլացի՛ր, Զուլյա՛: Ամեն ինչ լավ է: Փորձիր քնել: Երբ անհրաժեշտ լինի, ես քեզ կարթնացնեմ: Եվ միասին կհիանանք՝ դիտելով երկնքի գեղեցկությունները: Իսկ հիմա ես պետք է աշխատեմ:

– Ի՞նչ է կատարվում ձեզ մոտ: Մենք ձեզ չենք լսում: Կապը կտրվեց:

Զեկը գրավեց իր տեղը, անջատեց խաթարումների սարքը և կապվեց Դիսպետչերականի հետ:

«Դա էլ է ճիշտ. միևնույն է՝ այժմ չեմ կարող շփվել Զեկի հետ», – մտածեց Զուլյան: Եվ, վստահելով Զեկին, նա հարմար տեղավորվեց բազկաթոռի մեջ, փակեց աչքերը և խորասուզվեց մոռացության մեջ:

Դուրս լողալով գերտարածությունից՝ Զեկը նայեց լուսանցույցի մեջ: Նա պաշտում էր երկինքը դիտելը, որտեղ սփռված էին պայծառ աստղերը, որոնք, թվում էր՝ շատ մոտ էին: Գեղեցիկը զննելուց առաջացած այդ զգացողությանը անհնար էր վարժվել: Բայց այսօր ինչ-որ բան նրան զգաստացնում էր: Նա մեկ անգամ նորից ստուգեց երթուղային առաջադրանքը: Զեկը փորձառու օդաչու էր: Չէր կարող սխալվել: Դրանք ω-գալակտիկայի կոորդինատները չէին: «Ու՞ր ենք մենք թռչում»:

– Զուլյա՛, արթնացի՛ր, – հնչեց Զեկի ձայնը:

Մարզանքի երկարաձիգ տարիները զարգացրել էին ակնթարթային ռեակցիայի կարողություն: Եվ Զուլյան անմիջապես բացեց աչքերը:

– Մենք խնդիրներ ունենք, – երկար վարանումից հետո ասաց Զեկը:

– Ինչի՞ մասին ես խոսում, – նայելով Զեկին՝ հարցրեց Զուլյան:

– Ոչինչ չեմ հասկանում, Զուլյա՛: Ինչ-որ մեկը փոխել է ω-գալակտիկայի կոորդինատները: Մեզ այնտեղ չեն ուղարկել:

– Ինչպե՞ս կարող է դա հնարավոր լինել, – չհավատաց Զուլյան:

– Չգիտեմ:

– Ինչո՞ւ ՄԹԴ-ն չի արձագանքում: Չէ՞ որ նրանք մեզ լսում են, – չէր հասկանում Զուլյան:

– Ես միացրել եմ խաթարումների սարքը:

– Ինչո՞ւ:

– Դեռ չգիտեմ:

– Զե՛կ, մի՛ զբաղվիր ինքնագործունեությամբ: Զեկուցի՛ր քո կասկածների մասին:

– Համոզվա՞ծ ես:

– Իսկ ո՞ւր ենք մենք թռչում, – ժպիտը դեմքին՝ հետաքրքրվեց Զուլյան:

Երկար մտորելուց հետո Զեկը պատասխանեց.

– Կարծում եմ՝ Երկիր:

– Իսկ դու ինչպե՞ս ես հասկացել դա:

– Գնդաձև կուտակումների շնորհիվ: Ես մի հիսուն անգամ եղել եմ ω-գալակտիկայում և հինգ անգամ՝ մերձերկրային ուղեծրում և կարող եմ անսխալ հավաստել, որ թռչում ենք դեպի Երկիր: Մենք հայտնվել ենք պարուրաձև գալակտիկայի բազուկներից մեկում: Հարդագողի ճանապարհն է՝ Ծիր Կաթինը: Հեռու չէ Արեգակնային համակարգությունից, որի կազմում Երկիրը, այսօրվա օրով, միակ բնակելի մոլորակն է:

Զուլյային համակել էր զվարթ տրամադրությունը:

Մինչդեռ Զեկի անհանգստությունն աճում էր: Նա սովոր էր վստահել իր բնազդին:

Իսկ Զուլյան միայն ժպտում էր:

– Զե՛կ, իհարկե, ինձ համար հաճելի է, որ դու չես ուզում ինձնից բաժանվել, բայց դա անհաջող կատակ է: Առանց այդ էլ ես հուզված եմ: Իսկ բաժանումը… երկար չի տևի:

– Գիտեմ՝ դու ինձ չես հավատում, Զուլյա՛: Լավ, ես վաղուց դուրս չեմ եկել կապի:

Զեկը կապվեց ՄԹԴ-ի հետ: Իսկ Զուլյան տարակուսանքի մեջ ընկավ. «Զեկը չափազանց լուրջ էր: Դա կատակի նման չէ: Բայց եթե կատակ չէ, այդ դեպքում ի՞նչ է: Թեև ինչ զուշակեմ: Մի քանի ժամից ամեն ինչ կպարզվի: Գուցե, ծրարը հիմա՞ բացեմ: Ո՛չ: Ասել են՝ ժամանելիս, ուրեմն՝ ժամանելիս»:

Թռիչքից առաջ Զուլյային էին հանձնել պրակտիկայի ընթացքում նրա առաջադրանքին վերաբերող կնքված ծրար:

Կարծես կարդալով Զուլյայի մտքերը՝ Զեկն ասաց.

– Գուցե, հենց հիմա՞ բացես ծրարը:

– Դու հեռազգա՞ց ես: Մի՛ պնդիր, Զե՛կ, – արդեն պակաս վստահությամբ պատասխանեց Զուլյան:

Զեկը բարկացած էր. «Իրասածի»:

– Հասկանու՞մ ես՝ ամեն ինչ որքա՛ն լուրջ է: Ես պատասխանատու եմ քո անվտանգության համար: Թույլ տուր իմ գործն անեմ:

Զեկը հուզվել էր: Զուլյան նրան այդպիսին չէր տեսել: Եվ աղջիկը զիջեց:

Ծրարը բացելով՝ Զուլյան հասկացավ. «Մենք թռչում ենք Երկիր: Պրակտիկայի առաջադրանքը՝ մասնակցություն մարդկանց՝ անցյալ տեղափոխելու ծրագրին»:

«Զեկը սիրում է ապահովագրվել: Միայն խուճապ է սերմանում»: Սակայն հաջորդ րոպեին աղջիկը նրան գնահատեց ըստ արժանավույն. «Նա անմիջապես հասկացավ, որ մենք չենք թռչում ω-գալակտիկա: Բայց հանուն ինչի է այդ գաղտնիությունը: Չէ որ ծրագիրն էլ այդպիսին չէ»:

– Տարօրինակ է, Զե՛կ: Ինչո՞ւ է հենց ինձ տրվել այդ առաջադրանքը: Ես հո անցյալ տեղափոխելու մասնագետ չեմ: Տեխնոլոգիաներին էլ չեմ տիրապետում: Այդ հիմնախնդրի վրա աշխատում էր մի ամբողջ ֆակուլտետ: Մենք միայն այբուբենն ենք յուրացրել: Այդ թեմայով ընդամենը մի քանի պարապմունք ենք ունեցել:

– Զուլյա՛, փորձիր հիշել՝ այդ ծրագրից քեզ ի՞նչ է հայտնի, – ասաց Զեկը:

Եվ Զուլյայի հիշողության մեջ «վեր հառնեց» անցած կուրսը:

– Գալակտիկաների տիրակալները նպատակ էին հետապնդում, որ երկրացիները բնակվեն միայն Երկիր մոլորակի սահմաններում: Եթե հնարավոր լինի հասնել դրան, լավ: Իսկ եթե ոչ՝ երկրացիներին անցյալ տեղափոխելու ծրագիր է մշակված: Եվ քանի որ կամավորները մոգեր չեն, իսկ գործնականում միմյանցից չտարբերվող զուգահեռ աշխարհները շատ են, այդ թվում նաև անցյալում, ապա, ամենայն հավանականությամբ, կարելի է ասել, որ անցյալ վերադառնալով՝ նրանք կհայտնվեն զուգահեռ աշխարհներից ինչ-որ մեկում, և, այսպես թե այնպես, հնարավոր կլինի փոխել Երկրի ապագան՝ ընդհուպ մինչև ոչնչացումը:

– Իսկ եթե նրանց անգամ հաջողվի վերադառնալ անցյալի իրենց աշխարհը, ապա միշտ հակասություն կառաջանա իրենց աշխարհի և այն աշխարհի միջև, ուր նրանք վերադարձել են: Քանի որ շատ դժվար է սխալ թույլ չտալը, բայց կարելի է նաև այնպես հրահրել նրանց սխալ գործելու, որ իրենց հայեցողությամբ փոխվի Երկրագնդի ապագան: Եվ ամբողջ պատասխանատվությունը դրա համար կընկնի քեզ վրա: Հրաշալի է մտածված: Խոսք չկա, – հիացավ Զեկը:

– Գիտես, Զե՛կ, դեռ այն ժամանակ իմ մեջ բազմաթիվ հարցեր էին առաջացել: Մասնավորապես, անցյալը փոխելու օգնությամբ ինչպե՞ս վերահսկել այսօրվա վիճակը: Համենայն դեպս, ինձ թվում էր, ոչ մի կերպ: Բացի այդ, զուգահեռ աշխարհի միջոցով հնարավո՞ր է վերահսկել իրականը: Ակնհայտորեն՝ ոչ, եթե դու հրաշագործ չես: Դե, հենց հետազոտություններն էլ դեռ սաղմնային վիճակում էին:

– Իսկ դու էլ չզլացար այդ մասին արտահայտվել:

– Իհարկե: Դատի՛ր ինքդ: Տեղափոխության բնագավառի հետազոտությունները իրականացվում էին պլուտոնիումի ինչ-որ հազվագյուտ իզոտոպով, կարծեմ՝ ^{239m1}Pu: Եվ հենց այդ՝ արհեստականորեն սինթեզված, նվազ կենսունակ, այդ պատճառով էլ՝ փոքրաքանակ առկայությամբ ռադիոակտիվ տարրը ժամանակի մեքենայի մեջ կիրառվում է որպես վառելանյութ: Դրա օգնությամբ կարելի է տեղափոխվել ժամանակի մեջ այն զանգվածի համամասնությամբ, որն առկա է:

Անցյալ տեղափոխվելու վերաբերյալ հետազոտությունները իրականացել են երկու ուղղություններով. զուտ տեխնիկական՝ ենթադրելով հենց այդ պլուտոնիում իզոտոպի կուտակումը, որի միջոցով աշխատում է ժամանակի մեքենան, և մյուսը՝ անձնակազմի ուսուցման՝ ինչպես իրեն պահել: Գլխավորը՝ չփչացնել: Երբ տեղափոխությունը իրագործվում է մեկ, երկու օրում …մեկ ամսում: Ոչ մի սարսափելի բան չկա: Սակայն ժամկետի երկարացումը մեծացնում է անցյալ տեղափոխվելու ազդեցությունը ներկայի և ապագայի վրա՝ երկրաչափական պրոգրեսիայով: Եվ շատ կարևոր է աշակերտներին սովորեցնել՝ իրենց ինչպես պահեն ապագան փոխելու անհրաժեշտության առաջացման դեպքում:

Հասկանալի է, որ կարևոր է նաև հոգեբանական պատրաստվածությունը: Պատկերացնում ես՝ տեղափոխվում ես անհայտություն: Շուրջ բոլորը դատարկություն է: Դու

պաշտպանված ես միայն մեքենայի բրոնյայով: Բացի այդ, նվազագույն մի սխալ, և հայտնի չէ՝ ուր կվերադառնաս, ինչ ներկա, եթե ընդհանրապես կվերադառնաս:

– Եվ այդ ամենը դու մեկ ուրիշի հետ էլ ես քննարկե՞լ, – հետաքրքրվեց Զեկը:

– Բնականաբար: Ինչո՞ւ ես հարցնում:

– Աստվա՛ծ իմ, Զուլյա՛, կարելի՞ է այդքան միամիտ լինել: Դու բոլորից խելացի՞ ես: Քեզանից բացի, ինչ-որ մեկին այդ հարցերը հետաքրքրե՞լ են:

– Չգիտեմ: Կարծես թե՝ ոչ: Հա՛, այնտեղ կա նաև ուսուցման այսպիսի առարկա՝ «Պաշտպանական դաշտի ստեղծում», որն անտեսանելի է ուրիշների համար: Դա նույնպես անհրաժեշտ է անցյալ տեղափոխվելու համար, որպեսզի չվախեցնես շրջապատողներին և ինքդ հանգիստ դիտես, թե ինչ է եղել այնտեղ մեկ ամիս կամ մի տարի առաջ: Ընդ որում, տեղափոխվող մոգը հնարավորություն ունի, իր ցանկությամբ, շրջապատի համար լինել ինչպես տեսանելի, այնպես էլ անտեսանելի: Վերջին դեպքում նա պետք է օգտագործի ինչ-որ պաշտպանական էկրան, անանցանելի թաղանթ, որի ստեղծման տեխնոլոգիան ընդգրկված է ուսուցման այլ առարկայի մեջ: Ահա այդպես:

– Ուզում ես ասել, որ այդ ամենը հասկացել ես մի-երկու դասի ընթացքու՞մ:

– Ես լավ հիշողություն ունեմ:

– Ու դու կարող ես ստեղծել այդ էկրանը…

– Բանն էլ այն է, որ՝ ո՛չ: Դա իմ մասնագիտությունը չէ: Մենք միայն տեսական դասընթաց ենք անցել: Ավելին, ես որևէ մեկին չեմ ճանաչում, որն անցյալ տեղափոխված լինի ժամանակի՝ որոշ չափով նշանակալից հատվածում: Ես ուզում էի հաճախել այդ դասընթացի ֆակուլտատիվ պարապմունքներին, բայց ֆակուլտետի ղեկավարության կողմից այնպիսի հակառակության բախվեցի, որ որոշեցի այդ հարցը ապագային թողնել: Եվ, գիտես, ես անգամ շնորհակալ եմ նրանցից: Քանի որ այժմ որևէ կասկած չունեմ այն բանում, որ ուսուցման հաջորդ երեք տարիներին պիտի պարապեմ մոգության դպրոցում:

– Ոչ մի լավ բան: Դու գոնե հասկանո՞ւմ ես, թե ինչի մեջ ես խրվել: Հասկանո՞ւմ ես, թե խոսքն ի՞նչ փողերի մասին է:

– Հասկանում եմ, որ այդ ամենը շատ տարօրինակ է, – պատասխանեց Զուլյան:

– Ու դա միակ տարօրինակությունը չէ:

Զեկը խորասուզվեց իր մտքերի մեջ:

– Եթե ամեն ինչ վաղուց էր հայտնի, ինչո՞ւ այդ մասին մեզ չեն տեղեկացրել: ԵՍ-գալակտիկայից Երկիր հասնելու համար անհրաժեշտ է հաջորդաբար լինել մի քանի միջակա ուղեծրային կայաններում, որտեղ վառելիքի, պարենի, թթվածնի պաշարներ կան: Այդպիսով, գերտարածությունների միջով Երկրի ուղեծրային կայան կարելի է հասնել քսանչորս ժամում: Այնտեղից կանոնավոր հաղորդակցություն կա Երկրագնդի հետ: Երկու-երեք ժամը մեկ իրականացվում են տիեզերանավի առևտրական երթերը, որը գիտնականներին, տիեզերական զբոսաշրջիկներին, նաև բեռներ է հասցնում Երկիր, իսկ այնտեղից՝ հակառակ ուղղությամբ: Անհրաժեշտ է տեղը նավում նախապես ապահովագրել: Ես հիմա քեզ համար տեղ եմ ամրագրում: Բայց դու այնտեղ չես հայտնվի: Դու նավ չես նստի:

– Իսկ ես ինչպե՞ս կհասնեմ Երկիր:

– Վայրէջքային մոդուլով, սև անցքի միջոցով կընկնես զուգահեռ, այնտեղից էլ՝ իրական աշխարհ: Դու մոգ ես, կարող ես: Եվ հիշիր՝ չես կարող երկար ժամանակ գտնվել զուգահեռ աշխարհի այլ չափման մեջ, քանի որ այդ տարածությունը լավ է վերահսկում մոգության դպրոցը: Երկրի վրա՝ իրական աշխարհում, հսկողությունը պակաս կլինի: Այնտեղ հիմնականում գործում են երկրային տեխնոլոգիաները: Ուստի դու նրանց մեջ առավելություն կունենաս:

– Բայց ես չեմ կարող կառավարել վայրէջքային մոդուլը:

– Իսկ դա քեզ պետք էլ չէ: Այն ամենը, ինչ անհրաժեշտ է, ես հենց հիմա կբացատրեմ: Սև անցքը քեզ դուրս կհրի ինչ-որ տեղ: Դու կհայտնվես զուգահեռ աշխարհներից ինչ-որ մեկի այլ չափման մեջ, ազատ թռիչքի վիճակում: Այնտեղ էլ կհասկանաս անելիքդ:

– Հուսադրեցիր, բան չունեմ ասելու: Ինչի՞ համար է այդ զգուշությունը, Զե՛կ: Ոչինչ պետք չէ հորինել:

– Վերցրու շարժական Աստրոիդը: Դրան հնարավոր չէ մինչև վերջ հետևել: Այն ոչ մեկը չի գրանցել: Դրա վրա միայն մի համար կա՝ իմը: Ես այդպիսի մի համար ևս ունեմ՝ քոնը: Եվ հիշի՛ր ծածկագրերը: Աստրոիդ մուտք գործելու ծածկագիրը՝ 2198MSch, միջգալակտիկական WiFi մտնելու թույլտվության ծածկագիրը՝ 17ε-GJV: Աստրոիդը գործում է իրական ու զուգահեռ՝ ինչպես ներկա, այնպես էլ անցյալ աշխարհներում: Չպահպանես ծածկագրերը: Յուրաքանչյուր սեանսից հետո անջատիր Աստրոիդը: Բոլոր պարագաներում անջատի՛ր սնուցման բլոկը: Առնվազն հիսուն տարի լիցքավորման կարիք չի լինի: Բայց զգո՛ւյշ եղիր: Մի՛ վնասիր միջուկային մարտկոցների պատիճները: Դա թշնամիների դավերից ավելի սարսափելի է:

– Զե՛կ, գուցե դու տեղյակ չես, սակայն բարդագույն ձևերի հեռափոխադրության ուսումնասիրությունը իմ մասնագիտացումն է: Եվ բարձրագույն ձևի դեպքում անձի փոխադրումն իրականացվում է նրա թվային ծածկագրի փոխանցման հաշվին:

– Դե, այո՛, իհարկե, ամեն ինչ կախված է ազդանշանի հաղորդումից: Պրինտերը տպում է այն, ինչ իրեն տալիս է ազդանշանը: Տպվում են տեքստը, բանաձևը: Նշանակում է՝ մարդուն էլ կարելի է տպել:

– Մի՛ ծաղրիր, խնդրում եմ: Իսկապես, ելակետային օբյեկտին հանձնելու համար կարելի է օգտագործել հոլոգրաֆիկ եռաչափ պրինտերը: Իսկ որպես կապի միջոց է ծառայում միջգալակտիկական WiFi-ը:

– Հրաշալի է: Պետք է ենթադրել՝ դու կարող ես օգտվել Աստրոիդից:

Բայց Զուլյան այլևս չէր լսում Զեկին:

– Պատկերացնու՞մ ես, Զե՛կ, դու կարող ես ծածկագիրը փոխանցել գալակտիկաներին, ճամփորդել գալակտիկաներում: Թռիչքի անհրաժեշտությունն էլ կվերանա: Պարզապես կարելի է միջգալակտիկական WiFi-ով ուղարկել տեղեկությունը: Ինչպիսի՜ ազատ տարածություն երևակայության համար: Դա դեռ ամենաչնչին բանն է: Եվ դա իրականություն կդառնա: Միայն ծածկագրի հետ կապված որոշ բարդություններ են մնացել: Զուլյան միշտ զարմացնում էր Զեկին: Որոշակիորեն, նրանք ապրում էին տարբեր չափումներում: Խոսքն աղջկա անվտանգության մասին էր, գուցե՝ կյանքի, իսկ նա ռոմանտիկ երազանքների գիրկն էր ընկել:

– Եվ քանի դեռ հեռափոխադրման քո բարդ ձևերը չեն գործում, մենք պիտի թռիչքը իրականացնենք, – միայն կարողացավ արտաբերել Զեկը: – Ի՜նչ ձանձրալին ես, Զե՛կ, – ասաց Զուլյան: Նա վիրավորված էր: – Դու ինձ ինչու՞ լուրջ չես վերաբերվում: – Այն էլ ինչքա՜ն լուրջ: Հենց այդ պատճառով էլ անհանգստանում եմ քեզ համար: Մի՞թե դու չես հասկանում, որ դա թակարդ է: – Բանն ի՞նչ է, Զե՛կ: Դարձյալ ի՞նչն է սխալ: – Ամեն ինչ: Եվ Զուլյայի դեմքի տարակուսանքը նկատելով՝ ավելացրեց. – Լավ, այլևս գլուխդ չեմ տանի իմ կասկածներով: Բայց ուշադիր լսի՛ր ինձ: Երբ որ տեղ կհասնես, միանգամից չգնաս նշանակման վայրը: Մի քիչ ման արի, շուրջդ նայիր: Աշխատիր հասկանալ՝ որտեղ ես, շրջապատում ինչ է կատարվում: Եվ ինձ տեղյակ պահիր: Խոստացի՛ր, որ ամեն ինչ կանես այնպես, ինչպես ասացի ես: – Մի՛ կասկածիր, զգույշ կլինեմ, – վստահեցրեց Զուլյան: – Գլխավորը դրդապատճառն է: Ի՞նչն է քո համեստ անձի նկատմամբ նման հետաքրքրություն հարուցել: – Կպարզենք, ամեն ինչ կհաղթահարենք, – պատասխանեց Զուլյան: – Եթե անգամ չպարզենք էլ, համենայն դեպս, գլուխ կհանենք: Ես քեզ հավատում եմ, Զուլյա՛: Դու խիզախ ես, – քաջալերեց աղջկան Զեկը: Այնինչ անցյալ տեղափոխվելու ծրագիրն արդեն մեկնարկել էր: Դրա վրա շատ փող էր ծախսվել: Եվ ինչքան գեղեցիկ էր կազմակերպվել ամեն ինչ. «Մենք չափազանց շատ ենք աղտոտել բնությունը: Այդ ամենը կարելի է փոխել»: Մոգության դպրոցը շատ ջանքեր էր թափել: Տեղի է ունենում զանգվածային գիտակցության նպատակաուղղված զոմբիացում: Երկրի վրա ամենուրեք կախված են մարդկանց՝ անցյալ տեղափոխելու գիտափորձի մասին հայտարարություններ: Հեռուստատեսությամբ կլոր

սեղանների շուրջ են հավաքվում գիտնականներ, տնտեսագետներ, քաղաքագետներ: Հնչում են ելույթներ ծրագրի անհրաժեշտության, տնտեսական նպատակահարմարության և իրականացման մասին: Գովազդային հոլովակներ են պտտվում, որտեղ մուլտ-նկարներում, անգամ երեխաներին հասկանալի ձևով նկարագրվում են գիտափորձի նպատակները և խնդիրները: Կամավորներին առաջարկվում են մեծ գումարներ և երազանքի իրականացման հնարավորություն: Կիլոմետրերով հերթեր են գոյանում կամավորների ընտրության զանազան կետերում: Նրանցից շատերը փախստականներ են, ամեն ինչ, նաև հույսը կորցրած մարդիկ: Իսկ սա հնարավորություն է: Բազմաթիվ ցանկացողներից դեռահասների խումբ են հավաքում հատուկ ճամբարում: Բայց այդ ամենի մասին Զուլյան տեղյակ չէ: Այնպես, ինչպես մինչև վերջին ժամանակները դպրոցում չգիտեին, թե ով է հենց ինքը՝ Զուլյան: Նա սովորում էր ուրիշի անվան տակ: Մինչդեռ Զուլյան դուստրն էր ω-գալակտիկայի տիրակալի, որին տապալել էր սեփական եղբայրը՝ նրա կնոջն ու որդիներին սպանողը: Աղջիկը հրաշքով էր փրկվել: Նրան դաստիրակության էին հանձնել խորթ ծնողների: Զուլյային սատարող ուժերը մտադիր են նրան վերադարձնել օրինական իշխանությունը, երբ կլրանա աղջկա տասնութ տարին: Իսկ առայժմ նրանք ֆինանսավորում են նրա ուսումը մոգության դպրոցում: Այդ դպրոցը գալակտիկաների կառավարման համար կադրերի պատրաստման դարբնոց է: Այն ֆինանսավորվում է այդ գալակտիկաների տիրակալների տրամադրած միջոցներով: ω-գալակտիկան՝ որպես ամենամեծը և հզորը, հատկացնում է ամենաշատ միջոցները: Դպրոցն ավարտելու պահին Զուլյան լավագույն շրջանավարտն է: Զուլյայի հեղինակությունը և ինքնագնահատականը բարձրացնելու, ինչպես նաև գալակտիկային մանրամասն ծանոթացնելու նպատակով, քանզի նա պիտի կառավարեր այն, հովանավորները որոշեցին, որ աղջկա պրակտիկայի վայրը պիտի լինի ω-գալակտիկան, որտեղ ժամանակին պրակտիկա էր անցկացրել նաև նրա մայրը: Մոգության դպրոցում ուսումը շարունակելու համար, բարձր գնահատականներից բացի, պահանջվում էր Գալակտիկաների տիրակալների խորհրդի երեք անդամի երաշխավորագիրը: Զուլյայի անձնական գործի մանրազնին ուսումնասիրությունից ω-գալակտիկայի ղեկավարությանը ինչ-որ կերպ հայտնի դարձավ, թե ով է Զուլյան: Եվ նրանք աղջկան ուղարկեցին Երկիր: Հաշվարկը պարզ էր: Երկրի վրա բնապահպանական աղետները չափազանց շատ են, նրան սպառնում է սովը: Այդ մոլորակը նախատեսված չէ այդ քանակությամբ մարդկանց համար: Անկառավարելի գործընթացներից խուսափելու համար տարբեր ծրագրեր են մշակվել: Դրանցից մեկը մարդկանց՝ անցյալ տեղափոխելն է, նրանց ճակատագրերի փոփոխությունը: Անցյալը կառավարելով՝ գալակտիկաների տիրակալները փորձում են փոխել պատմության ընթացքը: Ծրագիրը բարդ է: Զուլյան, փորձառություն չունենալով, սխալ թույլ կտա, այնպես որ ծրագրի իրագործման ընթացքում կհաջողվի նրանից ձերբազատվել: Եվ դպրոցի վարկը չի արատավորվի: Արդեն մի քանի ժամ անց, ինքն իր մասին և իր հետ կապված՝ ապագայի պլաններից անտեղյակ, Զուլյան վայրէջքային մոդուլով մոտեցավ սև անցքին: Այն սկսեց աղջկան ներս քաշել: Զուլյան կորցրեց կառավարումը և հսկայական արագությամբ դեպի անդունդ էր սլանում լիակատար խավարի մեջ, որին հերթագայում էին փայլատ լույսի բռնկումները: Այդ զարհուրելի խավարի մեջ, այն է՝ պիտի ուշաթափվեր, երբ սև անցքը նրան լույս աշխարհ նետեց: «Ամբողջովին ինչպես երազում, – փայլկտաց աղջկա գլխում, – նշանակում է՝ իմ ժամանակը դեռ չի հասել»: Նա մոդուլից դուրս եկավ և կախվեց բազմաչափ տարածության մեջ, որն առանձնացել էր եռաչափ ուրվագծով: Դրա մեջ շարժվելով ինչպես միջանցքում՝ Զուլյան դեմ առավ անցքի: «Որտե՞ղ եմ ես: Մի բան պարզ է՝ Երկրի վրա, զուգահեռ աշխարհում: Դա արդեն լավ է: Համենայն դեպս, այստեղից պետք է դուրս պրծնել»: Հեռացնելով անցքի կափարիչը և վայր իջնելով, ավելի ճիշտ՝ սողալով սանդուղքով դեպի ներքև՝ Զուլյան հայտնվեց մութ, խոնավ, գարշահոտ ստորերկրյա թունելի մեջ: «Բարի գալուստ Երկրի վրայի իրական աշխարհ, Զուլյա»: Նա վառեց լապտերը՝ լուսավորելով իր ճանապարհը: Ոտքերը հրաժարվում էին իրեն ենթարկվել: Ճանապարհի յուրաքանչյուր մետրը նա հաղթահարում էր գերագույն ջանքերով: «Ոչինչ, կվարժվեմ տիեզերական ձգողականությանը»: Այդպես, ոտքերը քարշ տալով թունելի միջով,

Զուլյան հասավ անտառի եզրին և տապալվեց գետնին: «Ինչ լավ է, կարելի է մի փոքր հանգստանալ», – մտածեց նա և փակեց աչքերը: Կես ժամ անց Զուլյան արդեն շարժվում էր քաղաքի ուղղությամբ: Հանդերձանքը նա թաքցրեց անտառում: Իր հետ վերցրեց միայն ամենաանհրաժեշտը: Երթուղու վերջնակետը կամավորների պատրաստման ճամբարն էր: Թե ի՞նչ եղավ հետո, կարդացե՛ք հաջորդ գլուխը՝ կիմանաք:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.